



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



ASU THE MELIKIAN CENTER:
Russian, Eurasian & East European Studies
ARIZONA STATE UNIVERSITY



ԿԱՆԱՆՑ ԴԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Հովհաննես Հովհաննիսյան

- ✉ *Hovhannes Hovhannisyan*
- ✉ *Center for Gender and Leadership Studies*

Սույն հրատարակությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներին են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԵՐԵՎԱՆ 2014

Բովանդակություն

Գլուխ 1: Կանանց դերը Հայաստանում գործող ավանդական կրոնական կազմակերպություններում

§ 1 Կանանց դերը Հայ առաքելական եկեղեցում պատմաիրավական տեսանկյունից

§ 2 Կանանց դերի վերաբերյալ կարծրատիպերը ավանդական կրոնական համայնքներում

§ 3 Կանանց իրավունքների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը ավանդական կրոնական համայնքներում

Գլուխ 2: Կանանց դերը Հայաստանում գործող ոչ ավանդական կրոնական կազմակերպություններում

§ 1 Կանանց դերի ընկալման տարբերությունները ոչ-ավանդական կրոնական համայնքներում

§ 2 Հայ իրականությունը և ոչ-ավանդական կրոնական կազմակերպությունները

Առաջարկություններ

**ԿԱՆԱՅ ԴԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ
ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ**

Համառոտ նկարագրությունը: Այս հետազոտության նպատակն է վեր հանել Հայաստանում ավանդական ու ոչ ավանդական կրոնական համայնքներում կնոջ դերի ու տեղի ընկալումները համայնքի անդամների, հոգևորականների, հովիվների կողմից, ինչպես նաև պարզել, թե ինչպիսի դեկավար դերեր ունեն կանայք կրոնական համայնքներում: Կնոջ դերի ընկալումները կրոնական համայնքներում շատ դեպքերում պայմանավորված են ոչ թե կրոնական համայնքի կանոնական կամ դավանաբանական առանձնահատկություններով, այլև հայ հասարակության մեջ կնոջ դերի նկատմամբ առկա տարբեր մոտեցումներով: Կնոջ դերը հայ հասարակության մեջ առավել հակասական թեմաներից է, քանի որ փոփոխվող հարաբերությունների պայմաններում տեղի է ունենում կնոջ դերի նորովի վերաժնորում, նախկին կարծրատիպերի թուլացում ու վերացում, որոնք հաճախ հակասության մեջ են մտնում ավանդական ընտանեական պատկերացումների, նախկինում պատկերացրած արժեքային համակարգերի, կնոջը վերագրվող կարծրատիպային վարքականոնների հետ, որոնց առաջամարտիկը հաճախ հանդիսանում են հենց կրոնական համայնքներն ու կրոնական գաղափարներով սնվող հասարակարգերը:

Հաշվի առնելով վերջին շրջանում հայ հասարակության մեջ տեղ գտած կրոնական գաղափարների առատությունը, ինչպես նաև Հայ առաքելական եկեղեցու աճող իշխանությունը՝ հետաքրքրական էր պարզել, թե ինչպիսի ազդեցություն են ունենում այդ փոփոխությունները կնոջ դերի ընկալումների վրա: Արդյոք կան տարբերություններ կնոջ դերի ընկալման հարցերում ավանդական ու ոչ ավանդական կրոնական համայնքների ներսում և ինչպիսի դեկավար դիրքեր են զբաղեցնում կանայք այդ համայնքներում: Վերջին շրջանում որոշ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից փորձ կատարվեց առավել ակտիվ դերակատարում ունենալ «գենդեր» եզրի ու դրա հետ կապված քննարկումների մեջ ու հաճախ մամուլի սխալ տեղեկատվության պատճառով կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների դիրքորոշումները պայմանավորված էին հենց այդ ապատեղեկատվությամբ:

Այս հետազոտությունն իր որակի մեջ առաջին փորձն է վերլուծելու կնոջ դերի ու տեղի հետ կապված հարցերն ավանդական ու ոչ ավանդական կրոնական համայնքներում, որոնք նախկինում տաբույացված էին ու շատերի համար ոչ առաջնային:

Հետազոտության արդյունքում մշակվելու են տարբեր առաջարկություններ պատկան մարմինների, կրոնական ու հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի համար:

Մեթոդաբանությունը: Հետազոտությունը կատարվել է որակական մեթոդաբանության դիրքերից: Հետազոտության շրջանակներում հարցումներ ու հարցազրույցներ են կատարվել Հայ առաքելական եկեղեցու տարբեր թեմերի հոգևորականների ու թեմերում աշխատող անձանց շրջանակներում, ինչպես նաև 10-ից ավելի ոչ ավանդական կրոնական կազմակերպությունների շրջանակներում, որոնց մեծամասնությունը ներկայացնում են բողոքական/հիսունական տարբեր հարանվանությունների հովիվներ ու անդամներ: Մեր հետազոտության շրջանակներում առանձնակի շեշտադրում կատարեցինք հենց կրոնական համայնքներում առաջնորդ դիրքեր ունեցող անձանց (եպիսկոպոսներ, քահանաներ, հովիվներ և այլն) կարծիքների ու մոտեցումների հետազոտության վրա, քանի որ համայնքի ներսում հիմնականում նրանք են հանդիսանում «բազմապատկիչները» ու առավել լայն կարծիք ձևավորողները:

Հետազոտության նպատակներով այցելություն է կազմակերպվել դեպի Վայոց Ձորի ու Սյունիքի մարզեր, որոնց ընտրությունը պայմանավորված է եղել այդ մարզերի ավանդական ոչ այնքան ուժեղ կրոնատաճության հանգամանքով ու այդ տեսանկյունից այս համայնքներում առավել տեսանելի է կրոնական գաղափարների ազդեցությունը հասարակության մեջ ու կրոնական համայնքներում կնոջ դերի ու տեղի ընկալումների վրա: Հետազոտական թիմի առավելությունը պայմանավորված էր նախկին հետազոտությունների արդյունքում բոլոր կրոնական համայնքների ներկայացուցիչների շրջանակներում ունեցած վստահության ու համագործակցային մթնոլորտի առկայության փաստով, քանի որ հատկապես ոչ ավանդական կրոնական կազմակերպությունները որոշակի վերապահումով ու կասկածով են մոտենում տարբեր հետազոտական նախաձեռնություններին՝ հաշվի առնելով իրենց ունեցած բացասական փորձը ու կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հասարակության մեծամասնության կողմից առկա բացասական կամ ուղղորդված տրամադրությունները:

Գլուխ 1: Կանանց դերը Հայաստանում գործող ավանդական կրոնական կազմակերպություններում

§ 1 Կանանց դերը Հայ առաքելական եկեղեցում պատմափրավական տեսանկյունից

Կնոջ իրավունքների խնդիրը հայ հասարակության մեջ սերտորեն առնչվում է եկեղեցու ու եկեղեցական կանոնների հետ, որոնք էլ պայմանավորել են ոչ միայն կնոջ դերի պատմական ու իրավական կարգավիճակը, այլ նաև ավանդաբար որոշակի ազդեցություն թողել կնոջ դերի նորովի ընկալումների վրա Հայ առաքելական եկեղեցու սպասավորների ու հավատացյալների շրջանակներում: Կանանց իրավունքների մասին խոսվում է Դավիթ Ալավկա որդու ՀԱ կանոնում, ինչպես նաև Մխիթար Գոշի ու Սմբատ Սպարապետի դատաստանագրքերում: Համաձայն այդ կանոնների կանայք իրավունք չունեին քահանա ձեռնադրվել (չնայած մինչ այդ պրակտիկայում ևս նման դեպքերի չենք հանդիպում), զինվորական դառնալ, խաղողից գինի քամել, շուկայում առևտուր անել և այլն¹: Կինը ոչ միայն չէր կարող դատավոր լինել, այլ վկայություն տալ դատարանում, իսկ եթե վկաները միայն կանայք էին, ապա նրանց քանակը պետք է գերազանցեր տղամարդկանց քանակը երկու անգամ, որպեսզի նրանց վկայությունը արժեք ունենար: Ընդ որում կանայք չէին գալիս դատարան, այլ նրանց լսում էին տղամարդիկ ու նրանց անունից ցուցմունք տալիս դատարանում: Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում (հոդված 78) տղամարդը գլուխն է, իսկ կինը ոտները, այսպիսով կինը պետք է ենթարկվի տղամարդուն²: Այս դրույթը լիովին ցույց է տալիս միջնադարյան Հայաստանում կնոջ կարգավիճակը և թե ինչպես էին լուծվում հարցերը տղամարդկանց ու կանանց միջև: Նույնիսկ նախարարական տներում կանանց իրավունքների որոշակի սահմանափակումներ էին գործում: Որոշակի իրավահավասարություն գոյություն ուներ ժառանգականության հարցերի ժամանակ, չնայած այս պարագայում ևս տղամարդն ուներ որոշակի առավելություններ: Կանանց «անձնական սեփականություն» էր համարվում նրանց զարդերը՝ մատանիները, օղերը և այլն:

Այս ամենով հանդերձ պետք է նշել նաև այն առաջադիմական քայլերը, որոնք սահմանվել են տղայի ու աղջկա իրավահավասարության առումով: Այսպես, առաջ է քաշվել ամուսնության կամավորության սկզբունքը, երբ ամուսնության համար անհրաժեշտ էր երկուսի համաձայնությունը (Գոշ, Դատաստանագիրք, հոդ. 91): Ամուսնության համար անհրաժեշտ էր ծնողների համաձայնությունը, իսկ առանց հոր համաձայնության ամուսնացած կինը պոռնիկ էր համարվում (Բարսեղ Մեծ կանոն 38): Այս իմաստով ծնողների համաձայնության կանոնը ուղղակի հակադրվում էր ամուսնացողների կամավորության սկզբունքին: Հետաքրքրական է, որ եկեղեցին

¹ Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց, 1880, էջ 36:

² Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, Երևան, 1958. էջ 84:

պոռնկությունը չէր դիտում որպես մարմնավաճառություն, այլ դա առավելապես կնոջն անարգելու միջոց էր: Ամուսնական հարաբերությունների հարցերում եկեղեցական կանոնները առավել խիստ էին կանանց, քան տղամարդկանց նկատմամբ: Անհավատարմության դեպքում տղամարդը կարող էր թողնել կնոջը, իսկ կինը կարող էր հեռանալ միայն ժամանակավորապես: Տղամարդու դերը դիտվում էր առավելապես սոցիալական հարթության մեջ և եթե տղամարդը կարողանում էր սոցիալապես ապահովել իր ընտանիքն ու կնոջը, ապա կինը իրավունք չուներ նրանից հեռանալու, այլապես, կարող էր³:

Բավականին շատ էին եկեղեցական կանոնները մինչև ամուսնությունը կուսությունը կորցրած կանանց, նրանց հանիրավի գրպարտելու, կանանց խաբելու դեպքերի վերաբերյալ և հետաքրքրականն այն էր, որ փոխհատուցումը ստանում էր ոչ թե կինը, այլ նրա հայրը: Դատասանագրքերով մահապատիժ էր սահմանված մինչև ամուսնությունը կուսությունը կորցրած աղջիկների համար, իսկ գրպարտող տղամարդկանց բավարարվում էին միայն ճիպոտահարելով: Ամուսնացած կնոջ և տղամարդու հարաբերություններում բոլոր տեսակի առաջությունը տրվում էր տղամարդուն և այդ իրավական կարգավիճակը հիմնավորվում էր աստվածաշնչյան «... քո ամուսնուն պիտի ենթարկվես և պիտի իշխի քեզ վրա» (Ծննդ. Գ.16) դրույթի վրա: Եկեղեցական կանոններով ամուսնական հարաբերությունների կարգավորման մեջ մեծ տեղ էր հատկացվում մեղավորության խնդրին: Օրինակ, եթե ամուսնությունից առաջ զոյություն ունեցած հիվանդությունը ամուսիններից մեկը թաքցրել է, ապա մյուս ամուսինը իրավական առավելություն է ստանում նրա նկատմամբ:

Կնոջ ազատության, կյանքի, պատվի, առողջության, արժանապատվության քրեաիրավական, եկեղեցական պաշտպանվածությունն առավել ուժեղ էր սպանության, մարմնական վնասվածքների, բռնաբարության, բռնավիժման, բռնության, առևանգման և նմանատիպ այլ պայմաններում: Չնայած դրան շատ դեպքերում կանայք հանիրավի ենթարկվում էին դաժան պատիժների: Օրինակ, պետական դավաճանության մեջ մեղադրվածի կինը և երեխաները կարող էին վաճառվել ստրկության: Կամ սկեսուրը կարող էր «խրատելու նպատակով» ծեծել հարսին ու պատիժ էր կրում միայն այն դեպքում, երբ ծեծի հետևանքով մահ էր առաջանում: Միննույն ժամանակ կնոջ անհավատարմության դեպքում ամուսինը կարող էր բաժանվել կնոջից, սակայն նրան սպանելու իրավունք չուներ: Նմանատիպ կանոնները որոշակիորեն պաշտպանում էին կանանց առավել բռնի վերաբերմունքից ու դաժան վերաբերմունքից:

Կանանց նկատմամբ պատիժները առավել մեծ էին, եթե նույն վարքագիծը կինը դրսևորում էր քահանայի կամ հոգևորականի պարագայում: Այսպես, եթե քահանան ամուսնանում է ու պարզում, որ աղջիկը կույս չէ, ապա աղջկան ոչ թե մյուսների նման

³ Տես, նույն տեղում, էջ 104:

քարկոծում էին, այլ կրակով այրում՝ իբրև օրինակ գեհեհի: Միևնույն ժամանակ ամուսիններին իրավունք էր տրվում ծեծել կանանց, սակայն մահվան չհասցնել: Կնոջը ծանր մարմանական վնասվածքներ հասցնելը իրավական պատժի էր ենթարկվել ու կնոջը ծեծելը համարվել էր տղամարդուն ոչ վայել արարք:

Կնոջ նկատմամբ իրավական պատիժներ էին սահմանվել գիտակցաբար վիժում կազմակերպելու համար, ինչը հավասարվում էր մարդասպանի պատժին: Դավիթ Ալավկա որդու ԽՇ կանոնով պատիժ էր սահմանում ոչ միայն կնոջը, այլև նրան դրդողներին, օժանդակողներին, իմացող-չհայտնողներին և այլ մեղավորներին: Եթե պտուղը ձևավորված էր, ապա գործում էր կյանք կյանքի դիմաց օրենքը, իսկ եթե ոչ՝ ապա բավարարվում էին արյան գնի կեսը վճարելով ու ապաշխարելով:

Բնաբարությունը եկեղեցաիրավական, սովորությանն ու բոլոր այլ կանոններով համարվում էր լուրջ ու վտանգավոր հանցագործություն: Ամուսնությունից առաջ աղջկա կուսությունը հանիրավի խախտողը կամ անատակների պատժին էր արժանանում (Բարսեղ Մեծ, կանոն 22) կամ մեծ տուգանքների: Որոշ կանոններ տուգանքին զուգահեռ պարտադրում էին տղամարդուն այդ կնոջը ցմահ կին վերցնել: Եթե տղամարդը խաբեությամբ կնոջը տանում է ուրիշի տուն ու բռնաբարում, ապա նրան կամ մահապատժի էին ենթարկում կամ կտրում սեռական անդամը, իսկ եթե կինն էր նրան կանչել, ապա կտրում էին կնոջ քիթը՝ ամուսնու համաձայնության դեպքում: Անանսամոլության մեջ մեղադրվող տղամարդու սեռական օրգաններն էին կտրում ու նրան ուղարկում եկեղեցի՝ ցմահ ապաշխարանքի: Եթե աղջկան առևանգում էին և արդյունքում ամուսնանում, ապա նրանց երեխաները համարվում էին ոչ օրինաձին, իսկ բռնվելու դեպքում աղջկան վերադարձնում էին ծնողներին, իսկ հանցավորի սեռական օրգանները կտրում էին⁴:

Այսպես, վերոնշյալը ցույց է տալիս, որ եկեղեցաիրավական նորմերը կոչված էին կարգավորել հայ հասարակության կենցաղը, սոցիալական-ընտանեական հարաբերությունները, կնոջ ու տղամարդու իրավունքների սահմաններն ու այս առումով առաջադիմական էին իրենց ժամանակի ոգուն ու շնչին համապատասխան: Այլ խնդիր է, որ մերօրյա իրավական ու այլ պրիզմաներով նայելու դեպքում դրանք հաճախ մեզ ներկայանում են որպես չափից դուրս դաժան, ներկա հասարակարգի պայմաններին ընդհանրապես չհամապատասխանող, ինչը ևս բնական է: Այդուհանդերձ, միջնադարյան եկեղեցաիրավական այս կանոնների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ կանոնները որոշակի տրանսֆորմացիայի ենթարկվելով պահպանվել են ամուսնաընտանեական, սոցիալ-հասարակական ավանդությանն հարաբերություններում, որոնք առավել նկատելի են գյուղական համայնքներում, քան քաղաքաբնակ շրջաններում: Այսպես կնոջ կուսության, նախաամուսնական հարաբերություններում հոր համաձայնության, կնոջ ընտանիքի կողմից օժիտի

⁴ Տես նույն տեղում, էջ 96-97, 103:

ապահովման, ընտանեական հարցերում տղամարդու՝ իբրև որոշումներ կայացնողի ընդգծված առավելությունը կնոջ նկատմամբ շարունակում է կենսունակ մնալ գյուղական համայնքներում, չնայած նրան, որ խորհրդային Հայաստանի ազդեցությունը իրենց զգացնել է տվոլ ու այդ հարաբերություններում եկեղեցական մարմինը այլևս որևէ իրավասություն կամ դեր չունի:

§ 2 Կանանց դերի վերաբերյալ կարծրատիպերը ավանդական կրոնական համայնքներում

Սկզբնապես պետք է նշենք, որ Հայաստանում ավանդական կրոնական համայնքներ ասելով ի նկատի ենք ունեցել հիմնականում Հայ առաքելական եկեղեցին, Հայ կաթոլիկ եկեղեցիները: Անշուշտ Հայաստանում գործող եկեղեցիներից Ռուս ուղղափառ եկեղեցին ավանդական եկեղեցի է, իսկ Հայ ավետարանական եկեղեցին կարելի է ևս որոշակի վերապահումով անվանել ավանդական, սակայն մեր հետազատության շրջանակներում հիմնականում կենտրոնացել ենք մեծամասնության կրոնական կառույցին՝ այն է Հայ առաքելական եկեղեցու վրա ու կնոջ դերի ընկալումներին այդ եկեղեցու՝ նրա հավատացյալ համայնքի ու հոգևորականների շրջանակներում:

Հայտնի է, որ վաղ քրիստոնեական համայնքներում գործել է հավասարության գաղափարը, որն արտահայտվել է ներհամայնքային, ընտանեական, խմբային և այլ հարաբերություններում: Վաղ քրիստոնեական համայնքներում կոնջ դերի ընկալումները հիմնականում խարսխվել են Պողոս առաքյալի՝ Գաղատացիներին ուղղված թղթի 3.28 համարի վրա. «Այսուհետև ո՛չ հրեա կա և ո՛չ էլ հույն, ո՛չ ծառա կա և ո՛չ էլ ազատ, ո՛չ արու կա և ո՛չ էլ էգ, որովհետև բոլորդ էլ մեկ եք Քրիստոս Հիսուսի մեջ»: Վաղ քրիստոնեական համայնքներում գործում էր մարգարեների ինստիտուտը, որտեղ կային նաև կին մարգարաներ, ինչպես նաև՝ կին սարկավազներ: Կնոջ անլիարժեքության մասին գաղափարն առավել բնորոշ էր այդ շրջանում գործող ասկետական-մարգինալ կրոնափիլիսոփայական հոսանքներին (էնկրատիտներ և այլն): Հետագա դարերում վարդապետական տարբեր մոտեցումների զարգացմանը զուգահեռ կնոջ դերը էապես նվազեց ավանդական կրոնական համայնքներում ու սահմանափակվեց զուտ ընտանեական գործառույթներով ու պասիվ հավատացյալի կերպարով:

Հայ առաքելական եկեղեցին կնոջ դերի վերաբերյալ հստակ մշակված կանոններ չունի, սակայն մի բանն հստակ է, որ կինը չի կարող քահանայության աստիճան ունենալ Հայ առաքելական եկեղեցում: Մ. արդ. Բաբայանը նշում է, որ «հոգևորականը պատարագի ընթացքում խորհրդանշում է Քրիստոսին, ապա որպես քահանա՝ կատարում է հավիտենական քահանայապետ հաստատված Քրիստոսի հաղորդության խորհուրդը

և դրան մասնակից դարձնում ժողովրդին: Հետևաբար, միայն տղամարդը կարող է եկեղեցում և այլուր քահանայություն կատարել, քանի որ այդ ծառայությունը նրան է վստահված հենց Տիրոջից»: Այս տեսանկյունից Հայ առաքելական եկեղեցին քննադատաբար է մոտենում բողոքական այն հարանվանություններին, որոնք քահանայական կարգ են շնորհում կանանց:

Ավելին, Սմբատ քին. Սարգսյանը նշում է, որ պարտականությունների բաժանումը տղամարդու և կնոջ միջև ամենին չի նշանակում, որ Հայ առաքելական եկեղեցին խրախուսում է սեռային անհավասարությունը, այլ Հայ առաքելական եկեղեցին ճանաչում է գործառույթների տարբերությունը կնոջ և տղամարդու միջև: Չնայած այս պնդմանը, դժվար չէ չնկատել, որ Հայ առաքելական եկեղեցում կանայք բարձր պաշտոններ չունեն և չեն կարող ունենալ, որովհետև բոլոր բարձր ու ղեկավար պաշտոններին նշանակվում են բարձրաստիճան հոգևորականներ: Թերևս բացառություն են կազմում այն պաշտոնները, որոնք կապված չեն ուղղակիորեն հոգևոր գործունեության հետ, օրինակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գլխավոր հաշվապահի պաշտոնը: Հայ առաքելական եկեղեցին մեջբերում է Նոր կտակարանային հետևյալ հատվածը՝ իր տեսակետի հիմնավորման համար: «Ինչպես որ է Աստծու բոլոր եկեղեցիներում, կանայք թող լուռ մնան եկեղեցու մեջ, որովհետև թույլատրված չէ նրանց խոսել, այլ՝ հնազանդ լինել, ինչպես օրենքն էլ ասում է» (Ա Կորնթ. 14: 34, տե՛ս նաև՝ Ա Տիմ. 2: 11-15): Մինևույն ժամանակ կնոջ քահանայագործության հնարավոր գործառույթը հակադրվում է նրա մայրության ու որդեծնության առաքելություններին, քանի որ հղիության շրջանում և ընտանեկան հոգսերով ծանրաբեռնված կինը ժամանակ չի ունենա պատարագ մատուցել կամ հոգևոր ծառայությամբ զբաղվել: Այդուհանդերձ, այս մոտեցումը քննադատության չի դիմանում, քանի որ նույն սկզբունքով տղամարդիկ կարող են ունենալ բազմաթիվ պարտավորություններ, սակայն նրանք մի կողմ են թողնում իրենց ընտանեկան պարտականությունները և նվիրվում Աստծո պաշտամունքին: Նմանատիպ մոտեցումը նաև ինչ-որ առումով հակարդվում է կուսակրոնության գաղափարին, որը կիրառվում է միայն տղամարդկանց նկատմամբ: Եթե կանայք ևս հնարավորություն ունենային չամուսնանալու երդում տալ, ապա նրանք կկարողանային կենտրոնանալ միայն Աստծո պաշտամունքի վրա և հետևաբար զբաղեցնել նաև հոգևոր բարձր պաշտոններ եկեղեցում:

Այս իմաստով հետաքրքրական է, որ Հայ առաքելական եկեղեցու մոտեցումը առավելապես կապված է ոչ թե դավանաբանական առանձնահատկությունների, այլ ազգային-ավանդական մոտեցումներ ու ազգային ավանդույթների հետ, որոնցից շատերը ավելի հին են, քան քրիստոնեությունը: Հանրային դիսկուրսում հաճախ Հայ եկեղեցու դավանաբանությունը նույնացվում է հայ ազգի ավանդույթների հետ՝ հաշվի առնելով Հայ առաքելական եկեղեցու ունեցած պատմական դերակատարումը հայ ժողովրդի կյանքում և կնոջ դերի վերաբերյալ պատկերացումներն էլ ուղղակի ազգային

պատկերացումներից ու ավանդույթների տեսքով ներառվում եկեղեցու պաշտոնական դիրքորոշման ուղեծրի մեջ: Այս տեսանկյունից ավանդական եկեղեցիները կնոջ և տղամարդու դերերի բաշխման ու հոգևոր ծառայությունների մեջ կնոջ դերի ստորադասման մոտեցումներն ու գաղափարները հիմնավորում են տարբեր աստվածաշնչական մոտիվներով՝ Ադամի և Եվայի պատմությամբ, ինչպես նաև Հիսուս Քրիստոսի՝ արական սեռին պատկանելու հանգամանքով, որով էլ բացառում են կնոջ քահանայական հնարավոր գործունեությունն ու դրանով տարբերություններ դնում սեռերի միջև: Ավանդական եկեղեցիները մերժում են կնոջ և տղամարդու անհավասարության մասին պնդումները՝ նշելով, որ կնոջը քահանայություն չթույլատրելը կամ եկեղեցական կյանքում կնոջ դերի սահմանափակումները ոչ թե վկայում են եկեղեցու կողմից քարոզվող անհավասարության մասին, այլ եկեղեցին ընդունում է սեռերի տարբեր գործոններն ու դերակատարումներն ունենալու իրավունքն ու պարտավորությունը և միայն տարբեր հասարակական դերերն ու որ տարբերություններ են առաջ բերում կնոջ ու տղամարդու միջև, ինչը ավանդական եկեղեցիները բնական են համարում:

Հայ առաքելական եկեղեցու դիրքորոշումը կնոջ դերի վերաբերյալ ամփոփված են հետևյալ հիմնական մոտեցումների մեջ. ա) կինն իբրև մայր և ընտանիքի սյուն, բ) կինն իբրև առաքինի էակ, գ) կինն իբրև Տիրամոր կերպար կամ մարեմաբանությունը Հայ առաքելական եկեղեցում: Այս հարցերի քննարկումն էլ իրենով է պայմանավորում մերօրյա մի շարք հրատապ ու կարևորագույն հարցերի պատասխաններ, որոնք ուղղակիորեն կապված են կնոջ դերի, նրա իրավունքների, հասարակության մեջ նրա տեղի ու դերի և այդ հարցերի նկատմամբ Հայ եկեղեցու դիրքորոշման հետ: Խոսքը մասնավորապես վերաբերում է սեռի վրա հիմնված աբորտներին, ընտանեական բռնությանը, կնոջ նվազեցված դերին կառավարական բարձր աստիճաններում, արտագնա աշխատանքի արդյունքում ամուսինների կողմից ՄԻԱՎ վարակով կանանց վարակելուն և այլ խնդիրներին: Կնոջ հետ կապված կարևոր հարցերի շարքում է նաև կանանց կրթության, ինչպես նաև հիմնականում կանանց կողմից կրթության իրականացման խնդիրը:

ա) Հայ առաքելական եկեղեցու հոգևորականների և թե հետևորդների մեծամասնությունը կնոջ դերն հիմնականում պատկերացնում է ընտանեական ոլորտում ու մայրության շրջանակներում: «Ընտանիքը նման է եկեղեցու, որի քահանան մայրն է», Գարեգին Ա Հովսեփյանց կաթողիկոսի այս խոսքերի մեջ խտացված կերպով ներկայացված է Հայ առաքելական եկեղեցու դիրքորոշումը կնոջ դերի վերաբերյալ⁵: Հոգևորականների մոտեցմամբ քրիստոնեական աստվածաբանության համաձայն կոնց ու տղամարդու միջև կա հավասարություն, քանի որ կինը ստեղծվել է տղամարդու սրտին մոտ գտնվող կողոսկրից, սակայն գոյություն ունի բնական տարբերություն կնոջ և տղամարդու միջև: Ս. Էջմիածնի

⁵ Ամբողջական հոդվածը տե՛ս <http://www.aravot.am/2012/11/16/311549/>

միաբան Արսեն սրկ. Զոհրաբյանի խոսքերով Նոր Կտակարանում կանայք երբեմն ավելի առանցքային դեր են խաղում, քան տղամարդիկ: Մեջբերելով Պողոս առաքյալի խոսքերը տղամարդու ու կնոջ հավասարության մասին՝ սարկավազն, այնուամենայնիվ, նշում է կնոջ ու տղամարդու տարբերությունը՝ նույնպես հղում կատարելով Պողոս առաքյալին. «Կանայք իրենց մարդկանց թող հնազանդ լինեն, ինչպես կհնազանդվեն Տիրոջը, որովհետեւ մարդն է գլուխը կնոջ, ինչպես որ Քրիստոս գլուխն է Եկեղեցու, եւ Ինքն է փրկիչը այդ մարմնի: Եվ ինչպես Եկեղեցին հնազանդվում է Քրիստոսին, նույնպես եւ կանայք թող հնազանդվեն իրենց մարդկանց ամեն ինչում»:

Քրիստոսի և առաքյալների արական սեռ լինելու հանգամանքի վրա հիմնվելով՝ Արսեն սարկավազը պնդում է, որ քահանայագործելու իրավունքը տրված է տղամարդկանց, մինչդեռ կանանց վերապահված է մայրությունը: Միննույն ժամանակ հնարավոր չէ չանդրադառնալ Հայ առաքելական եկեղեցու կողմից կատարվող պսակի խորհրդին, որի ժամանակ քահանան տղամարդուն հարցնում է «տեր ես», իսկ կնոջը «հնազանդ ես» հարցերը, ինչը տարբեր ժամանակներում դիտվել է որպես կնոջ իրավունքների ոտնահարում և տղամարդու ու կնոջ հավասարության չընդունում: Հոգևորականների կողմից այս բառերը մեկնաբանվում են այլաբանորեն որպես «հոգատարություն» և «ծառայություն», որը կապ չունի մարդու իրավունքների ոտնահարման ու սեռերի հավասարության հետ: Շմավոր քահանա Դևոնյանի կարծիքով. «Հնազանդ լինել բառը ամեննիկն չի ոտնահարում կանանց իրավունքները: Այդ ֆեմինիստական շարժումը հորինվածք է, չկա կանանց իրավունքների ոտնահարում, կան պարզապես ազգային, տեղային սովորություններ, որոնք հասարակության անդամներին որոշակի իրավունքներ են տալիս կամ էլ չեն տալիս»: Այդուհանդերձ, պետք է նշել, որ հասարակ հավատացյալների մեծ մասը այդ տերմինները մեկնաբանում է հենց ուղղակի իմաստով ու եղել են դեպքեր Հայ առաքելական եկեղեցում, երբ հայ ու այլազգի զույգերի ամուսնության ժամանակ խնդիրներ են ծագել այդ բառերի արտասանության հետ կապված:

Կնոջ մայրության ու ընտանիքի սյուն լինելու գաղափարի քննարկման ժամանակ անընդհատ շեշտը դրվում է դերերի բնական բաժանվածության վրա, համաձայն որի աստվածային նախախնամությամբ կանանց նախատեսված է այլ դեր, տղամարդուն՝ այլ: Այդուհանդերձ, հետաքրքրական է, որ «մայրություն» կոչվող դերի հասկացվում է ոչ թե զուտ որդեծնությունը, այլ ընտանիքի ներսում առկա ողջ պարտավորությունների բազմությունը՝ սկսած հասարակ կենցաղից մինչև երեխաների խնամք ու պատասխանատվություն: Մինչդեռ տղամարդու դերը առավելապես ընկալվում է ընտանիքից դուրս, այսինքն առավելապես արտաքին՝ աշխատանքային ակտիվությամբ: Սմբատ քահանա Սարգսյանի խոսքերով. «Աշխատանքի ու պարտականությունների բաժանումը բնավ չի նշանակում անհավասարություն: Եթե տանը ճաշը կինն է պատրաստում, իսկ տղամարդը հոգում ընտանիքի հիմնական ֆինանսական հարցերը, դա չի նշանակում, թե տղամարդիկ ավելի կարևոր են: Եթե

կանայք զավակ են ծնում, իսկ տղամարդիկ՝ ոչ, դա չի նշանակում, թե որևէ մեկն ավելի կամ պակաս կարևոր է: Դա պարզապես դերերի բաժանում է»: Հետաքրքրական է, որ Հայ եկեղեցու հոգևորականներից որևէ մեկը չի մատնանշում արդի հասարակության փոփոխվող պահանջները ու կնոջ և տղամարդու դերերի նորովի վերաբաշխման իրողությունը, որն արդեն առկա է հայ հասարակության մեջ: Այս իմաստով Հայ առաքելական եկեղեցին պետք է արագ կարողանա արձագանքել այս փոփոխվող իրողություններին ու փորձի սոցիալական հայեցակարգային մոտեցումներով վերացնի այն ճեղքը, որն առաջացել է ստատիկ մոտեցումների ու փոփոխվող իրողությունների շնորհիվ:

բ) Ավանդական կրոնական համայնքների ներկայացուցիչների համար կինը ասոցացվում է մաքրության ու անաղարտության հետ, որը նաև շաղկապված է առաջին գաղափարի՝ կնոջ մայրության ու ընտանիքի ամրության հետ: Հետաքրքրական է, որ ընտանեկան ամրության խնդիրը ևս ուղղակիորեն կապվում է կնոջ դերի հետ ու այս համատեքստում խոսվում կնոջ ինքնագոհաբերման մասին: Համաձայն այս տրամաբանության կինը պետք է հանդուրժողական լինի տղամարդու նկատմամբ, ով միգուցե այդքան էլ հանդուրժողական վերաբերմունք չունի կոնց նկատմամբ, ինչը նշանակում է, որ կնոջ հանդուրժողականության ու ինքնագոհաբերման գաղափարների տակ ուղղակիորեն թաքնված է կնոջ իրավունքների ոտնահարման, երբեմն էլ բռնությունների կոծկման ու չիրապարակայնացման արատավոր պրակտիկան: «Ինքնագոհաբերումը պետք է կատարվի լռությամբ» արտահայտությունը վերը նշվածի վառ ապացույցն է:

Մեկ այլ արատավոր գաղափար է սեփական ազգի ու կնոջ դերի բացառիկության գաղափարը, որի ջատագովն են Հայ առաքելական եկեղեցու հոգևորականներից շատերը: Տարբեր ենթատեքստերում անընդհատ շեշտելով հայ կնոջ դերի բացառիկությունը՝ նրանք հասարակության մեջ առկա ախտերի ու արատների հիմնական մեղավոր են տեսնում «օտարոտի բարքերը»՝ այդպես էլ չհստակեցնելով, թե ինչ են հասկանում այդ բառակապակցության տակ: Կնոջ առաքինությունների մասին խոսելիս օգտագործվում են հետևյալ բառերը՝ «մեղմ», «հեզաբարո», «գթասիրտ», «բարի», «խոհեմ», «հանդուրժող», «զաղտնապահ», «ճկուն» և այլն, որոնք շատ հաճախ բնորոշում են մտածողության առանձնահատկությունները:

Հարցազրույցները ավանդական համայնքների ներկայացուցիչների հետ ցույց տվեց, որ կնոջ առաքինությունների մասին խոսելիս հիմնականում ենթատեքստում շեշտվում է սեռական բարոյականությունը, որից էլ բխում են մնացած եզրակացությունները: Հետաքրքրական է հայ հոգևորականի կարծիքը հայ հասարակության մեջ առկա կարմիր խնձորի ավանդույթի վերաբերյալ, ով կարծում է, որ կարմիր խնձորի ավանդույթը եկեղեցու հետ կապ չունի, սակայն եկեղեցին խրախուսում է մարմնական ու հոգևոր մաքրությունը և կուսությունը, այսինքն կողմնակից է ավանդույթի պահպանմանը (Շմավոն քահանա): Ավանդական համայնքի ներկայացուցիչները չեն

խրախուսում նաև մինչամուսնական սեռական հարաբերությունները կնոջ և տղամարդու միջև:

զ) Հայ առաքելական եկեղեցին կնոջ կերպարի ու դերի մասին խոսելիս հիմնականում որպես նախակերպար կամ նախատիպ է ընդունում Մարիամ Աստվածածնին: «Հայ կինը պետք է նմանվի Տիրամորը», - ասում է Բեյրութի Քալիքի «Սուրբ Հոգի» համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի դասախոս Թամար Տասնապետյանը: Մարեմաբանությունը Հայ առաքելական եկեղեցու կարևորագույն վարդապետական ուղղություններից է, որից էլ բխել ու բխում են կնոջ տեղի, դերի, գործառույթների, վարվելակերպի վերաբերյալ հիմնական մոտեցումները: Մարեմաբանությունը համարվում է եկեղեցու փրկչագործական վարդապետության առանցքը, որն անհնար կլինի առանց Քրիստոսի մարմնավորման, ինչը մարդ-Աստված համագործակցության վառ վկայությունն է, որտեղ առանցքային է Մարիամի դերը: Ի տարբերություն Հռոմի կաթոլիկ եկեղեցու Հայ առաքելական եկեղեցին չունի Մարիամի անաղարտ հղիության մասին դոգմա, սակայն այս պարագայում ևս էական նշանակություն է ձեռք բերում կնոջ մաքրության գաղափարը կուսության պահպանման միջոցով, ինչպես նաև մայրության գաղափարը, որը Բագրատ եպս. Գալստանյանի մոտեցմամբ ուղղակիորեն մատնանշում է հղիության արհեստական ընդատման անընդունելիությունը Հայ առաքելական եկեղեցու տեսանկյունից: Դարեր շարունակ Հայ առաքելական եկեղեցին առաջնորդվել է հենց այս՝ Աստվածաշնչում նկարագրված Աստվածամոր կերպարի առանձնահատկությունների միջոցով՝ կնոջ դերի վերաբերյալ իր պատկերացումներում:

Այս առումով պետք է ասել, որ Հայ առաքելական եկեղեցին հստակ դիրքորոշում ունի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման վերաբերյալ, որն առավել լավ արտացոլված է Բագրատ եպս. Գալստանյանի «Հայաստանի չճնվող մայրերը» հոդվածում⁶: Նա խնդիրը դիտարկում է իր բազմաշերտության մեջ՝ աստվածաբանական, իրավաբանական, բարոյական, կրթական հարթություններում ու ցույց տալիս, որ «սեռասպանության» այս երևույթը սպառնում է հասարակության արժեքային ու բարոյական խորը անկմամբ ու հղի է բազմաթիվ անվերականգնելի ու բացասական երևույթներով: Համաձայն Բագրատ եպիսկոպոսի խնդիրը բազմաշերտ է ու ներառում է աղջիկների նկատմամբ տղա երեխաների ունեցած գերապատվության թյուր մտածողությունը, բժիշկ-հիվանդ հարաբերության կոռուպցիոն ռիսկերը, առողջապահական զարգացած տեխնոլոգիաների սխալ և անվերահսկելի կիրառումը, մարդկային իրավունքի բացարձակեցումն ու պատասխանատվության անտեսումը, կանանց իրավունքի խախտումը և խտրականության դրսևորումը, աստվածաբանական, մարդաբանական, բարոյագիտական, ժողովրդագրական, իրավական եզրաշերտը և վերջապես երկրի անվտանգության ռազմավարական գերագույն նշանակությունը:

⁶ Առավել մանրամասն տե՛ս <http://www.lin.am/212547.html>.

Մեր հետազոտության նպատակներից ելնելով կանգ կառնենք կանանց իրավունքների խնդրի վրա, որը բարձրացվում է բարձրաստիճան հոգևորականի կողմից: Համաձայն նրա մոտեցման, կինն իբրև Աստվածամոր վեհության ու առաքինության կերպար, պետք է հարգանքի արժանանա ու նա չպետք է դիտվի իբրև զուտ վերարտադրողական «գործիք», այլ հասարակության մեջ լիովին իրավունքներ վայելող և նույնիսկ, ինչ-որ առումով, առաքինության ու մաքրության ուղենիշ հանդիսացող կերպար: Հետևաբար, պտղի արհեստական ընդհատումը, հատկապես սեռով պայմանավորված, մեղք է և դատապարտելի հավասարապես թե՛ կամավորապես այն գործող մոր, թե՛ պարտադրող հոր կամ ընտանիքի և թե՛ զանազան պատճառներով այն իրականացնող բժշկի կողմից, համաձայն Հայ առաքելական եկեղեցու մոտեցման: Այդուհանդերձ, սրբազան հայրը չի մասնավորեցնում այն դեպքերը, որոնք թույլ կտան կանանց ընդհատելու իրենց հղիությունը (բռնաբարության արդյունքում հղիացածներ, կնոջ առողջությանը էական սպառնալիքի պարագայում և այլն), քանի որ Հայ առաքելական եկեղեցին դեռևս միասնական մոտեցում չունի այս հարցերի վերաբերյալ:

Այս ամենով հանդերձ, այնուամենայնիվ հարկ է նշել, որ հղիության արհեստական ընդհատումը կատարվում է հենց հիմնականում Հայ առաքելական եկեղեցու նումինալ հավատացյալներ հանդիսացող անձանց կողմից, քանի որ իրական հավատացյալները կհետևեն եկեղեցու խոսքին ու մոտեցմանը և կհրաժարվեն այդ պրակտիկայից: Հայաստանի որոշ շրջաններում (Գեղարքունիքի, Սյունիքի մարզեր) կատարված դիտարկումները հիմք են տալիս պնդելու, որ հղիության արհեստական ընդհատումները կատարվում են եկեղեցու հետ նումինալ կապ ունեցող անձանց կողմից, որոնք որևէ աստվածաբանական, կրոնաբարոյական կամ իրավական պատկերացումներ չունեն այս երևույթի բացասական անդառնալի հետևանքների մասին: Այս տեսանկյունից Հայ առաքելական եկեղեցու սպասավորները մեծ դեր ունեն կատարելու երևույթի բացասական ու պատճառների բնույթի մասին համակողմանի տեղեկատվություն տարածելու ու քարոզչության միջոցով հնարավոր դեպքերը կանխարգելելու համար:

§ 3 Կանանց իրավունքների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը ավանդական կրոնական համայնքներում

Վերը նշված բոլոր խնդիրները այս կամ այն կերպ կապվում են կնոջ կրթության ու կրթված կանանց սերունդ ունենալու հիմնահարցերի հետ: Մյուս կողմից հարցերի մի ստվար հատված կապված է կանանց տեղեկացվածության մակարդակի հետ, որտեղ մեծ գործ ունեն անելու ոչ միայն հասարակական կազմակերպությունները, այլ նաև եկեղեցուն կից հայորդաց տները, օրիորդաց միությունները, տարատեսակ

կազմակերպություններ, որոնք գործում են եկեղեցու հովանու ներքո: Թեկուզև վերը նշված՝ կանանց հղիության արհեստական ընդհատման հետ կապված բավականին մեծ է տեղեկացվածության պակասը ու ընդհանուր կրթական մակարդակը: Կանանց մի ստվար հատված ծանոթ չեն ոչ միայն իրենց իրավունքներին ու բազմաթիվ խնդիրների իրավական կողմին, այլ նաև տարրական պատկերացումներ չունեն բարոյահոգեբանական ընկալումների, ընտանեկան իրական արժեքների, ընտանիքում կնոջ իրական տեղի ու դերի, խտրականության բացառման ու տարատեսակ այլ հարցերի վերաբերյալ: Այս հարցերում ավանդական կրոնական համայնքները բավականին մեծ անելիքներ ունեն, քանի որ այդ կանանց մեծ մասը աչքի է ընկնում իրենց ազգային-պահպանողական խեղված մոտեցումներով ու պատկերացումներով և ավանդական եկեղեցական կառույցի ու նրա ներկայացուցիչների կողմից արված կտրուկ հայտարարությունները, քարոզչությունը կարող են էական ազդեցություն ունենալ իրավիճակի փոփոխության վրա:

Հետաքրքրական է, որ հայ հասարակական կյանքում կանայք ընտրելու ու ընտրվելու իրավունք չեն ունեցել և Արևելյան Հայաստանում նման իրավունք են ստացել միայն 1906թ. Էջմիածնի կենտրոնական ժողովի պատվիրակների ընտրության ժամանակ (չնայած որևէ կին-պատվիրակ այդպես էլ չընտրվեց), իսկ արդեն 1917թ. Գևորգ Ե կաթողիկոսի կոնդակով վերականգնվում է կանանց ընտրելու և ընտրվելու իրավունքը: Հայ առաքելական եկեղեցին ներառել է բազմաթիվ կանանց ու աղջիկների Հայ եկեղեցու թեմերում՝ իբրև վարչության անդամներ, երիտասարդաց միության ատենապետներ, կիրակնօրյա դպրոցների ուսուցիչներ և այլն:

Կնոջ կրթության խնդիրը կարևորվում է Հայ առաքելական եկեղեցում ոչ միայն սեփական իրավունքներն ու շահերը պաշտպանելու տեսանկյունից, այլ նաև որպես ընտանիքում՝ դստերի ու որդիների հիմնական դաստիարակությամբ զբաղվող անձի, որը մեծ դերակատարում ունի հոգեպես ու ֆիզիկապես առողջ սերունդ դաստիարակելու գործում: Բացի այդ, Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչները նշում են, որ կանայք են հիմնականում ներգրավված մինչդպրոցական ու դպրոցական կրթության տրամադրման ու կազմակերպման հարցերում ու կնոջ դերը այս տեսանկյունից շատ ավելին է, քան տղամարդունը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում պարբերաբար տեղի ունեցող քահանայից ժողովների ժամանակ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում երեցկնոջ կամ քահանայի կնոջ ինստիտուտի ձևավորմանը, զարգացմանն ու արդյունավետ գործարկմանը: Իբրև հաջողված օրինակ ներկայացվում է Արագածոտնի թեմում իրականացված «Լույս մանկանց» կիրակնօրյա դպրոցների ծրագիրը, որին թեմի երեցկանայք գործուն մասնակցություն են բերել ի նպաստ երեխաների հոգևոր դաստիարակության: Ժողովի ընթացքում որոշվեց երեցկանանց համար ամենամյա հավաքներ կազմակերպել ապրիլի 7-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, որոնք առավել կնպաստեն

համայնքներում հովվական կյանքի մեջ նրանց օգտակար ներգրավվածությանը: Չնայած երեցկանանց եկեղեցում տեղ տալու հանգամանքին՝ այնուամենայնիվ, պետք է նշենք, որ երեցկանանց, այսպես կոչված «առաջնորդության» դերը պայմանավորված է քահանա-ամուսնու դերով ու քահանա ամուսնու ֆոնի ներքո սահմանափակվում են նաև կնոջ դերն ու իրավասությունները, ինչպես նաև այդ դերի ընկալումը համայնքի կողմից:

«Կրթված կանայք հասարակության համար գանձ են», - գրել է Միխիթար Գոշը 12-րդ դարում: Նրա «Դատաստանագիրքը» ներառում է դրույթներ բռնի ամուսնությունների դեմ, քաջալերում է սեփականության հավասար բաժանումը և քրեական տուգանքների կիրառումը կանանց դեմ բռնություն գործադրողների նկատմամբ: Խոսվում է նաև կանանց պատվի և արժանապատվության ճանաչման և հարգման, կնոջ ամուսնական տարիքի, ամուսնալուծվելու, 2-րդ անգամ ամուսնանալու, և այլ իրավունքների մասին ու շատ հաճախ տարբեր արատների հիմք էր համարվում հենց կրթության ու կրթված լինելու պակասը, սեփական իրավունքներից անտեղյակությունը, որը շարունակվում է մինչև օրս: Հնում Հայ առաքելական եկեղեցում եղել են սարկավագուհիներ, որոնք չունեին որևէ հոգևոր իշխանություն և քահանայի պատվերով մկրտության էին պատրաստում կանանց, զբաղվում էին մանկատան երեխաների խնամքով ու դաստիարակությամբ: Կրում էին սև վերարկու և քող, որ տրվում էր հոգևորականի օրհնությամբ: Հայ կնոջ դերը մեծ է եղել վանքերի, եկեղեցիների կրթության գործում:

Ներկայումս կանայք ակտիվ կրթադաստիարակչական դերակատարում ունեն երիտասարդաց միություններում, հայորդաց տներում: Կան տիկնանց միություններ, որտեղ կինը կազմակերպում է եկեղեցու հոտի լիարժեք կայացումն ու ապահովում հոգևոր առողջ մթնոլորտը: Կանանց դերը անփոխարինելի է եկեղեցական երգչախմբերում, ինչպես նաև եկեղեցիներից շատերում մոմավաճառները հենց կանայք են, որոնց հետ առաջին հերթին առնչվում են հավատացյալները եկեղեցի մտնելիս: Հայաստանի դպրոցներում պարտադիր համարվող Հայոց եկեղեցու պատմության առարկայի դասավանդումը ևս հիմնականում կատարվում է կանանց կողմից, ինչպես նաև կիրակնօրյա դպրոցներում կատարվող դասավանդման գործընթացը:

Այս ամենը ի մի բերելով կարող ենք նշել, որ Հայ առաքելական եկեղեցու կրթադաստիարակչական գործունեության մեջ կանայք առանցքային դեր ունեն, որը դրսևորվում է կրթական գործի կազմակերպման ու իրականացման մեջ, սակայն միևնույն ժամանակ պետք է նշել, որ գլխավոր պաշտոններում կամ համապատասխան կառույցների գլխին կանգնած են միայն տղամարդիկ՝ հոգևորականների կամ աշխարհիկ գործիչների տեսքով: Այս տեսանկյունից կանանց՝ եկեղեցու գործունեության մեջ ներգրավվածության հարցերին հոգևորականների մեծ մասը տալիս է կրթադաստիարակչական գործառույթներով սահմանափակվող պատասխաններ, իսկ առաջնորդության (քահանա դառնալու կամ կնքահայր լինելու և այլն) վերաբերյալ հարցերին տալիս են առավելապես մեկնողական. խուսափողական

պատասխաններ, որոնց հիմքում ընկած են դերերի ու գործառույթների բաժանումը, պատմական օրինաչափությունները, Հիսուսի ու առաքյալների օրինակները, սուրբ ավանդությունների պահպանումը և այլն: Նույնիսկ օրինակ է բերվում այն հանգամանքը, որ Հիսուսի խաչելության ժամանակ նրա կողքին մնացին միայն կանայք, իսկ տղամարդ քահանաների տեսական խոսքերի ապացուցումը հնարավոր է միայն նվիրված ու առաքինի կանանց պրակտիկ վարքի ու կյանքի միջոցով: Ներկայումս «Սուրբ Հռիփսիմյանց միություն» անունով մի քանի մենուհիներ են ծառայում Սուրբ Հռիփսիմե եկեղեցում, որոնց գործունեությունը սակայն բավականին սահմանափակված է ու լայն տարածում և արձագանք չի գտնում հայ հասարակության շրջանում: Դեռ ավելին, արձագանքներն ու ընկալումները այս միության վերաբերյալ առավելապես ծաղրական են ու վիրավորական:

Հետաքրքրական է, որ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը 2010թվականը հայտարարել էր կնոջ տարի՝ նկատի ունենալով հայ կնոջ դերը հայ ժողովրդի ու նրա առանցքային դերակատարումը Հայ առաքելական եկեղեցու կյանքում: Այս տեսանկյունից շեշտվում է հայ կնոջ դերը՝ իբրև Մայր, ով իր ամուսնու հետ միաժամանակ պայքար մղելով, նպաստել է հայ ազգային ինքնության պահպանությանը ու հայ ժողովրդի միասնակության ամրապնդմանը: Նշվում է, որ կանայք առանցքային դերակատարում են ունեցել պատմականորեն, ինչպես նաև 19-20-րդ դարերի հոգևոր-մշակութային վերագարթոնքի ժամանակ էական ներդրում են կատարել հայ ժողովրդի հոգևոր-մշակութային, գիտական, կրթական, գրականագիտական, դիվանագիտական և այլ բազմաթիվ ոլորտներում:

Գլուխ 2: Կանանց դերը Հայաստանում գործող ոչ ավանդական կրոնական կազմակերպություններում

§ 1 Կանանց դերի ընկալման տարբերությունները ոչ-ավանդական կրոնական համայնքներում

Ոչ-ավանդական կրոնական համայնքներում կանանց դերի վերաբերյալ ընկալումներում կան էական տարբերություններ՝ հաշվի առելով այդ կրոնական կազմակերպությունների բնույթը՝ սկսած բողոքական եկեղեցիներին յուրահատուկ որոշակի ազատական մոտեցումներից մինչև հիսունական-պենտեկոստալ եկեղեցիների որոշ մասին բնորոշ ծայրահեղ պահպանողական մոտեցումները ընտանեական արժեքների, կնոջ դերի ու դրա հետ փոխկապակցված հարցերի վերաբերյալ: Ի տարբերություն ավանդական կրոնական ուղղությունների և մասնավորապես Հայ առաքելական եկեղեցու, ոչ-ավանդական կրոնական ուղղությունները սահմանափակված չեն ազգային սահմաններով և նրանցից շատերը հանդիսանում են առավել մեծ ու ընդհանուր կրոնական ընտանիքի անդամներ, որն ունենում է իր ուղղակի ազդեցությունը տվյալ կրոնական կազմակերպությունների զաղափարախոսություն, ներքին ու արտաքին կյանքի վրա:

Այս իմաստով ոչ ավանդական կրոնական ուղղությունները առավել ուժեղ են ենթարկվում արտաքին քաղաքական ու ինստիտուցիոնալ ճնշումներին կապված կանանց իրավունքների ու հավասարության հարցերին, ինչպես նաև ենթարկվում են ներքին կազմակերպական ու սոցիալ-մշակութային ճնշումների: Այս ճնշումների արդյունքում է, որ կանայք հաճախ այս կազմակերպություններում առավել մեծ հնարավորություններ են ստացել առավել բարձր դիրքեր զբաղեցնելու, դառնալու խմբերի ղեկավարներ, ստանձնելու փոքր հոգևոր գործառութային պաշտոններ, որոնք այդպես էլ բարձր պաշտոնների չեն վերածվում:

Մարգինալ կրոնական ուղղություններում (Wessinger, Catherine (ed). 1993. *Women's Leadership in Marginal Religions: Explorations outside the Mainstream*. Urbana: University of Illinois Press) տեղի է ունեցել տղամարդու քահանայության ու առանձնակի դերի վերաբերյալ որոշակի դեմիֆոլոզիզացման գործընթաց, մերժվել ֆորմալ քահանայությունը և կնոջ դերի շրջանակները դուրս բերվել մայրության ու ամուսնության շրջանակներից: Նմանատիպ կրոնական ուղղություններից շատերում (սպիրիտուալիզմ, քրիստոնեական գիտություն, թեոսոֆիա և այլն) կանայք հաճախ ձեռք են բերում մարգարեական հեղինակություն ու կանանց հարիզմատիկ հեղինակությունը վերաճում է իրական իշխանության եկեղեցու ներսում: Սովորաբար նման երևույթներ նկատվում են այն կրոնական կազմակերպություններում, որոնք չունեն հստակ

քահանայական օժան կարգ (Lawless, Elaine J. 1993. "Not So Different a Story after All: Pentecostal Women in the Pulpit." Urbana and Chicago: University of Illinois Press.) և չնայած դրան, նույնիսկ այս համայնքներում, կանանց էական մարգարեական, հիմնադիր կամ այլ դերից հետո, նորից դեկը ստանձնում են տղամարդիկ: Հայաստանում, նմանատիպ երևույթ նկատվել է ավանդական հիսունական համայնքի որոշակի պառակտման արդյունքում հարիզմատիկ մի խմբի առաջացման ժամանակ, երբ իրական իշխանությունը նոր խմբում ստանձնել է Շողիկ անունով քարոզիչ-լիդերը:

Այս առումով պետք է նշել, որ ոչ ավանդական կրոնական համայնքներում կանանց ու տղամարդկանց որոշակի իրավահավասար հարաբերությունները, ինչպես նաև պարզեցված նվիրապետական համակարգը ու կանանց ներգրավվածությունը եկեղեցիների գործունեության տարբեր ոլորտներում առավել են մոտեցրել կանանց եկեղեցուն, ովքեր իրենց համարում են տվյալ եկեղեցու մի մասնիկն ու անքակտելի միավորը: Այսպես կոչված աշխարհիկ առաջնորդության շատ պաշտոններ լրացվում են հենց կանանց կողմից, որոնք շատ դեպքերում ներգրավված են նաև քարոզչության կազմակերպման ու հավատքի տարածման հարցերում: Երբեմն ոչ ավանդական կրոնական ուղղությունների արագ տարածման հետևանքով խնդիր է առաջանում կանանց ներգրավվածության տարբեր եկեղեցական գործերի մեջ, որով էլ ավելի է բարձրանում կանանց դերը:

Ավանդական ու ոչ-ավանդական կրոնական ուղղություններին բնորոշ է մի առանձնահատկություն, երբ կանայք ավանդաբար իրավունք չեն ունեցել հոգևոր-աստվածաբանական կրթություն ստանալու, որի արդյունքն էլ հանդիսացել է այն, որ կանայք իրավունք չեն ստացել քահանայության գործառույթներ ստանձնելու: Ներկայումս կանայք իրավունք ունեն աստվածաբանական կրթություն ստանալու աշխարհիկ աստվածաբանական հաստատություններում, որպիսին ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետն է, ինչը սակայն ևս հնարավորություն չի տալիս կանանց հետագայում քահանայության կարգ ստանձնելու, սակայն հնարավորություն է տալիս ներգրավված լինելու եկեղեցու հետ կապված տարատեսակ գործունեությունների մեջ: Աստվածաբանական համալսարաններում ունեն նաև ոչ ավանդական կրոնական ուղղությունները, որտեղ ևս հիմնականում սովորում են տղամարդիկ, սակայն դրանց կարգավորման մեխանիզմները տարբերվում են Հայ առաքելական եկեղեցում գործող մեխանիզմներից:

Արդի շրջանում, երբ կրոնը ու կրոնական աշխարհայացքը սկսեց առավել վառ դրսևորվել հանրային տիրույթում ու ժողովրդավարական արժեքները սկսեին ավելի շատ քարոզվել տարբեր ակտորների կողմից՝ կանայք հնարավորություններ ստացան եկեղեցու աշխարհիկ ծառայությունների ոլորտից տեղափոխվելու առավել էկոմենիկ բնույթի կազմակերպություններ, որոնք նախկինում հիմնականում զբաղեցնում էին տղամարդիկ: Այդ կազմակերպություններում կանայք ստանձնում են տարբեր

առաջնորդական պաշտոններ՝ սկսած նախագահությունից վերջացրած տարբեր խմբերի ղեկավարումից ու կազմակերպումից:

Չնայած նրան, որ Հայաստանում տարածված ավանդական ու ոչ ավանդական կրոնական ուղղությունները մերժում են կանանց քահանայությունը, այնուամենայիվ, օրեցօր առավել է մեծանում ներքևից եկող ճնշումն ու պահանջները հատկապես ոչ-ավանդական ուղղություններում: Ավանդական ուղղություններում, ինչպես նաև ոչ-ավանդական ու շատ պահպանողական ուղղություններում (ինչպիսին է ավանդական հիսունականների կազմակերպությունը) կանանց կողմից քահանայության գործառույթների ստանձնման դեմ են կանանց մեծամասնությունը, որոնք ավանդաբար ընդունում են, որ այդ դերը վերապահված է միայն տղամարդկանց: Դեռ ավելին ոչ ավանդական կրոնական ուղղությունների առավել պահպանողական թեր արգելում է կանանց շպարվելը, կարճ կիսաշրջագետներ հագնելը, աբորտի խնդիրը բավականին սուր է դրված այդ համայնքում ու շատ հարցերում կանայք պարտավոր են հետևելու իրենց ամուսիններին: Այս իմաստով կարելի է ասել, որ ոչ-ավանդական կրոնական ուղղություններից շատերը «ավելի հայկական» են, քան Հայ առաքելական եկեղեցին՝ կանանց վերապահված իրենց իրավունքներով ու դերակատարությամբ:

Ոչ-ավանդական կրոնական համայնքների հովիվների հետ մեր անցկացրած հարցազրույցների արդյունքում պարզվեց, որ շատ հարցերում նրանց մոտ գերիշխում է առավելապես էթնիկական գործոնը, քան կրոնականը: Այսինքն, ոչ ավանդական կրոնական ներկայացուցիչներից շատերի մոտ հայկական ինքնությունը դեռևս գերակայում է կրոնական ինքնությանը ու նրանք կանանց դերի մասին հարցարդումներին առավելապես պատասխանում էին որպես հայ տղամարդիկ և ոչ թե որպես կրոնական փոքրամասնությունների հովիվներ: Չնայած այդ հանգամանքին նրանց կարծիքները համեմված ու հիմնավորված էին աստվածաշնչյան տարբեր մեջբերումներով, որոնք հիմնականում համընկնում են Հայ առաքելական եկեղեցու սպասավորների կողմից արված մեջբերումներով կանանց դերի ու տեղի վերաբերյալ:

Ոչ-ավանդական կրոնական կազմակերպություններից միայն «Կյանքի խոսք» եկեղեցին է, որ ունի հստակ ձևակերպված սոցիալական հայեցակարգ ու այդ հայեցակարգում իր ուրույն տեղն ունի կնոջ ու տղամարդու հարաբերությունների ու կնոջ դերակատարման մասին պատկերացումները: Համաձայն այս եկեղեցու, ընտանեկան փորձը մարդուն օգնում է հաղթահարել եսասիրությունը և առողջ քաղաքացիության հիմքեր է գցում: Հատկապես ընտանիքում են ձևավորվում ճիշտ հարաբերությունները մտերիմների հետ, ինչն էլ, իր հերթին, արտացոլվում է ընդհանուր առմամբ ողջ հասարակության վրա: Անհատականության ձևավորման գործում ընտանիքի դերը բացառիկ է, դրան չեն կարող փոխարինել սոցիալական այլ համակարգերը: Քրիստոսի եկեղեցին ամբողջությամբ բացահայտել է կնոջ արժանապատվությունն ու բարձր կոչումը: Եկեղեցում կինն ակտիվ մասնակցություն ունի կազմակերպչական, քարոզչական, դաստիարակչական, բարեգործական

աշխատանքներում:

Բարձր գնահատելով կանանց դերը և ողջունելով նրանց քաղաքական, մշակութային և սոցիալական իրավահավասարությունը տղամարդկանց հետ՝ Կյանքի խոսք եկեղեցին միաժամանակ չի արդարացնում կնոջ՝ որպես ամուսնուհու և մոր դերի ցածրացման միտումը: Տղամարդն ու կինը Աստծո և հասարակության առջև հավասար են իրենց արժեքավորմամբ, բայց դա չի վերացնում նրանց բնական տարբերությունը և չի դարձնում նրանց կոչումը միանման ինչպես ընտանիքում, այնպես էլ հասարակությունում: Եկեղեցին կնոջ կոչումը տեսնում է ոչ թե տղամարդուն ուղղակի նմանվելու և նրա հետ մրցակցելու, այլ Տիրոջ կողմից կնոջը տրված կարողությունների զարգացման մեջ:

Այս վերջին ձևակերպման մեջ հստակ երևում է նմանությունը կնոջ ու տղամարդու դերային տարբերությունների մասին Հայ առաքելական եկեղեցու պնդման հետ, ինչը ցույց է տալիս, որ կանայք չունեն ոչ-ավանդական կրոնական այս համայնքում այն իրավունքները, ինչ տղամարդիկ, չնայած նրանք զբաղեցնում մի շարք կարևոր կրթական, դաստիարակչական, կազմակերպչական ու այլ պաշտոններ:

Սյունքիում գործող ավետարանական եկեղեցիներից հովիվներից մեկի կարծիքով ավետարանական եկեղեցին խտրականությամբ չի վերաբերվում կնոջը և նրա դերակատարմանը հասարակության մեջ: Նախաքրիստոնեական աշխարհում գոյություն ուներ այն ընկալումը, որ կինը տղամարդու համեմատ ավելի ցածր դիրքում պետք է լինի և նույնիսկ որոշ երկրներում նա համարվում էր գույք: Փոխվող ժամանակի հետ փոխվում են նաև դիրքորոշումներն ու մոտեցումները: Բանն այն է, որ մենք Նոր Կտակարանում տեսնում ենք, որ կնոջ դերը փոխվում է թե հասարակության մեջ և թե ընտանիքում: Քրիստոսի մեջ երկուսն էլ հավասար են, և այս հավասարությունը սահմանում է Հիսուսը: Հովիվի կարծիքով հասարակության մեջ այսօր կնոջ իրավունքները նույնն է ինչ և տղամարդունը, սակայն ընտանիքում հստակ բաժանություն կա դերակատարությունների մեջ, սակայն դա չի վերաբերվում իրավունքներին, այլ կնոջն ու տղամարդուն հասանելի դերակատարմանը, կինը մայր է և օգնական, իսկ տղամարդն համարվում է առաջնորդ, սա չի ենթադրում, որ տղամարդը ավտորիտար որոշումներ է կատարում, քանի որ քրիստոնեական ընտանիքում կարևոր որոշումները կատարվում են համատեղ: Ավետարանական եկեղեցու հովիվի կարծիքով Քրիստոսի եկեղեցին ամբողջությամբ բացահայտել է կնոջ արժանապատվությունն ու բարձր կոչումը և դժվար կլիներ պատկերացնել եկեղեցին առանց հոգատար և պատասխանատու կնոջ: Ավետարանական Եկեղեցիներում կանայք ակտիվ մասնակցություն ունեն կազմակերպչական, դաստիարակչական, բարեգործական աշխատանքներում, մասնակցություն ունեն եկեղեցու բազմաբնույթ ծրագրերի մեջ, առանց նրանց դժվար է պատկերացնել երգչախումբն ու կիրակնօրյա քրիստոնեական դաստիարակչության մանկապատանեկան դպրոցը: Որոշ ավետարանական համայնքներում կանայք (բայց ներկայումս ոչ Հայաստանում)

նույնիսկ զբաղեցնում են հովվի պաշտոն և քարոզում են: Երևի թե եկեղեցում չկա մի ոլորտ, որտեղ ընդգրված չլինեն կանայք: Ավետարանական եկեղեցիները բարձր են գնահատում կանանց դերը և ողջունում են նրանց քաղաքական, մշակութային և սոցիալական իրավահավասարությունը տղամարդկանց հետ:

Հետաքրքրական դիտարկում է կատարում ավետարանական հովիվը՝ նշելով, որ ի տարբերություն կանանց տղամարդիկ խուսափում են եկեղեցի հաճախելուց՝ համարելով, որ այն ավելի կանանց և երեխաների համար է: Բացի այդ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայ տղամարդիկ դիմում են աշխատանքային միզբացիայի, ապա կունենանք այսպիսի մի պատկեր, եկեղեցի են հաճախում մեծամասամբ կանայք և երեխաները: Այդ պատճառով էլ եկեղեցական ծառայություններում հիմնականում ընդգրված են լինում կանայք և բնականաբար ծառայությունների մեծամասնությունն էլ ուղղված է հենց այս խմբին:

Միևնույն ժամանակ նա նշում է, որ ավետարանական մկրտական եկեղեցիներում կանայք չեն քարոզում և դա ոչ այն պատճառով, որ գոյություն ունի գենդերային խտրականություն, այլ այն պատճառով, որ եկեղեցին հետևում է նորկտակարանային ուսուցմանը, որ կանայք չպետք է քարոզեն և այդ գործը բացառապես պատկանում է տղամարդկանց, սակայն, եթե հաշվի առնենք այն փաստը, որ եկեղեցում հաճախ են կազմակերպվում սեմինար դասընթացներ կանանց համար, ապա այս պարագայում կինը կարող է ուսուցանել այդ դասընթացների ժամանակ: Ավետարանական եկեղեցիներում գործում են ձեռային աշխատանքների խմբակ, կիրակնօրյա քրիստոնեական դաստիարակչության դպրոց, բարի լուրի խմբակներ, որտեղ հիմնականում դասավանդում են կանայք կամ երիտասարդ մասնագետ աղջիկներ:

Ավետարանական եկեղեցիներում եկեղեցական ծառայությունների ոլորտը ինչ-որ իմաստով զրավված է կանանց կողմից, օրինակ եկեղեցում երեցկինը անցկացնում է աստվածաշնչյան խորհրդատվություն, կան ծառայող քույրեր, ովքեր հոգաբարձություն են կատարում հիվանդ կամ նորադարձ հավատացյալներին, այցելություններ կատարում հիվանդանոց, վարում աստվածաշնչի ուսումնասիրման տնային խմբակներ և այլն: Եկեղեցում կանայք կամ աղջիկները ընդգրկված են նաև երգչախմբի մեջ, ոմանք նվագում են տարբեր երաժշտական գործիքների վրա: Պատկերացնել եկեղեցու կառավարումը առանց կանանց, դժվար է, ուստի փորձառու հավատացյալ կանայք մասնակցություն են ունենում նաև եկեղեցու կառավարման մեջ՝ խորհրդատվությամբ, առաջարկներով, աջակցությամբ՝ նույնիսկ հանձն առնելով որոշ գործողությունների պատասխանատվություն: Որոշ ավետարանական եկեղեցիներում գործում են այսպես կոչված կիդս կլաբներ (երեխաների ակումբներ), որոնք նմանվում են Հայ առաքելական եկեղեցում գործող կիրակնօրյա դպրոցներին, որտեղ գործում են ձեռային աշխատանքների կամ կերպարվեստի խմբակներ, նկարչության խմբակներ, երբեմն օտար լեզուների կամ համակարգչային դասընթացներ, երգչախումբ:

Հայաստանում գործող բոլոր կրոնական փոքրամասնությունների, այդ թվում Եհովայի վկաները ու Մորմոնի եկեղեցին, շրջանակներում միայն խարիզմատիկ բողոքական ուղղություններն են, որոնք ընդունում ու պրակտիկայում կիրառում են կանանց՝ եկեղեցու հովիվներ լինելու հանգամանքը և պրակտիկան: Այդուհանդերձ, այդ կանանցից շատերը չեն ստանում ձեռնադրություն, ուղղակի սովորույթի ուժով քարոզող կամ առաջնորդող կանանց համայնքում անվանում են հովիվներ:

Համաձայն ավետարանական եկեղեցիների հովիվների մեծ մասի կողմից արտահայտած կարծիքների՝ տղամարդն ու կինը Աստծո և հասարակության առջև հավասար են իրենց արժեքավորմամբ, բայց դա չի վերացնում նրանց բնական տարբերությունը և չի դարձնում նրանց կոչումը միանման ինչպես ընտանիքում, այնպես էլ հասարակությունում: Եկեղեցին կնոջ կոչումը տեսնում է ոչ թե տղամարդուն ուղղակի նմանվելու և նրա հետ մրցակցելու, այլ Տիրոջ կողմից կնոջը տրված կարողությունների զարգացման մեջ: Համարյա միահամուռ բոլոր եկեղեցիների ներկայացուցիչները պնդում են, որ իրենց կողմնակից են կնոջ և տղամարդու իրավահավասարությանը, սակայն ընդունում են նաև, որ նրանց վերապահված դերերն ու պատասխանատվությունները տարբեր են: Տնային խմբակների գերակշռող մասի, մանուկների, պատանիների, գթության, խորհրդատվության, միջոցառումների կազմակերպման, քարտուղարության և բարեխոսական աղոթքի ծառայությունների ավագները կանայք են: Թեև կանայք առայժմ չեն ներգրավված հովվական առաջնորդական կազմում, սակայն նրանք հրավիրվում են ընդլայնված խորհրդի աշխատանքներին և իրենց ներդրում են բերում համայնքի առաջընթացի և ներքին կառավարման հարցերում:

§ 2 Հայ իրականությունը և ոչ-ավանդական կրոնական կազմակերպությունները

Ավելորդ չէ նշել նաև, որ հայ հասարակության մեջ տարածված է այն տեսակետը, որ ոչ-ավանդական կրոնական ուղղությունները առավել ազատական են, քան ավանդականները, ինչը այդքան էլ ճշգրիտ կարծիք չէ, քանի որ ոչ-ավանդական կրոնական ուղղություններից շատերը իրենց մոտեցումներում և հատկապես եկեղեցում ու հասարակության մեջ կանանց դերի ու տեղի վերաբերյալ մոտեցումներում առավել պահպանողական են ու ավանդապաշտ:

Ավետարանական եկեղեցիների հովիվները նշում են, որ կնոջ դերն արդի հայ հասարակությունում երկակի է: Ընտանեկան համատեքստում այն հիմնականում կարևորված է որպես մայր, կին, ընտանեկան օջախի ջերմացնող և այլն, սակայն ընտանիքից դուրս կնոջ դերի հանդեպ վերաբերվում են, որպես երկրորդական, հավելյալ և ածանցյալ մի իրականության՝ հանդեպ տղամարդու: Կանայք զբաղեցնում

են ցածր պաշտոններ, ստանում են ավելի ցածր աշխատավարձ և այլն: Որոշ հովիվներ անդրադարձնալով նույնիսկ կանանց՝ բանակում հնարավոր ծառայությանը նշեցին, որ այն միայն պետք է կամավոր լինի, ինչպես նաև մեծ ուշադրություն դարձրեցին կանանց անվտանգության ու ֆիզիկական բռնություններից պաշտպանելու խնդիրներին: Նրանք նշում են, որ կանայք պետք է իրավունք ունենան ապահովված լինելու իրենց բնակության, աշխատանքային, հասարակական վայրերում, այդպիսին կարող են լինել օրինակ հավելյալ տեսախցիկների տեղադրումը, նրանց մեքենաների առավել հարմար կայանատեղերի տրամադրումը և այլն:

Մինևույն ժամանակ ավետարանական եկեղեցու հովիվները նշում են, որ չնայած վերջին տարիներին նկատվում է կանանց դերի բարձրացման միտումներ (կառավարչական գործառույթների տրամադրում, մեքենա վարել և այլն), այդուհանդերձ այդ միտումները բավականին թույլ են դանդաղ ու ոչ բավարար կանանց իրավունքների, դերի բարձրացման տեսանկյունից:

Ավետարանական եկեղեցիների ու նրանց հովիվների մասին խոսելիս պետք է հաշվի առնել մի շարք հանգամանքներ, որը բնորոշ է նաև Հայ առաքելական եկեղեցուն. հովիվների մեծ մասը կանանց դերի ու պատասխանատվության վերաբերյալ հարցին առաջին հերթին վերաբերում ու մոտենում էին որպես տղամարդ, հետո որպես հայ և վերջում միայն որպես ավետարանական եկեղեցու անդամ: Մեր այցելությունների տարբեր ավետարանական ընտանիքի անդամ եկեղեցիներ ցույց տվեցին, որ կանայք հաճախ ամաչում են խոսել իրենց իրավունքներից, պատկերացում չունեն այդ մասին, իսկ առավել հանդիպող երևույթը հայ իրականության մեջ տարածված ամոթխածության երևույթն է, որն առավել է դրսևորվում հատկապես հովիվ ներկայությամբ:

Կանանց մի ստվար հատվածը ոչ միայն դեմ էին կնոջ՝ քահանայության իրավունքներ ստանալուն, այլ նաև դեմ էին կանանց կողմից սեփական իրավունքների ու շահերի պաշտպանությանն ուղղված տարբեր հասարակական կամ միջազգային կազմակերպությունների ջանքերին, քանի որ ելնում էին այն կարծրատիպային ելակետից, որ նման նախաձեռնություններն ուղղված են հայ ընտանիքի քայքայմանն ու ոչնչացմանը: Շատերը բնական են համարում, որ եկեղեցում կանանց նկատմամբ պետք է գործի որոշակի սահմանափակումների համակարգ, մինչդեռ ողջունում են հասարակության մեջ կանանց դերի բարձրացումը, ինչպես նաև կառավարչական մարմիններում՝ նշելով, որ կանանց բնորոշ բարությունն ու այլ դրական հատկանիշներ կարող են փոխել այդ մարմինների բնույթը:

Ավետարանական համայնքի անդամները դատապարտում էին կանանց նկատմամբ ընտանիքում կամ ընտանիքից դուրս որևէ բռնություն և հովիվների վկայությամբ իրենց համայնքներում նման դեպքերը հատուկենտ են կամ ընդհանրապես չեն հանդիպում, քանի որ հաճախ հովիվին տեղյակ են պահում խնդիրների մասին ու հովիվը կարող է

միջամտել ու որոշակի հարցեր լուծել: Ամուսնալուծությունները նույնպես կրոնական համայնքներում չեն խրախուսվում, քանի որ շեշտը դրվում է ամուր ու կայուն ընտանիք ունենալու վրա: Ավելորդ չէ նշել նաև, որ ինչպես կրոնական մեծամասնության, այնպես էլ փոքրամասնությունների ներկայացուցիչները դատապարտում են սեռական փոքրամասնություններին ու դա համարում հիվանդություն: Դեռ ավելին, կրոնական փոքրամասնությունների շատ ներկայացուցիչներ առավել սուր էին արտահայտվում այս հարցերի վերաբերյալ՝ օգտագործելով «գարշելի», «զզվելի» ու այլ որակումներ և արտահայտություններ: Սեռական փոքրամասնություններին տրվող իրավունքները ուղղակի հակասում են ընտանիքի ու կնոջ և տղամարդու հարաբերությունների վերաբերյալ նրանց հայեցակարգային մոտեցումներին և իրենց անհամաձայնությունն են հայտնում, երբ սեռական ու կրոնական փոքրամասնությունների իրավունքները դիտարկվում են միևնույն հարթության մեջ ու երբեմն միջազգային ու տեղական հասարակական կազմակերպությունների կողմից հավասարության նշան դրվում նրանց միջև:

Մեկ այլ հետաքրքիր դիտարկում ևս, որը կապված է ոչ ավանդական կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից Հայաստանում վերջին շրջանում մեծ քննարկումների տեղիք տված «զենդեր» տերմինի մեկնաբանությանն ու վերլուծությանը: Հետաքրքրական է, որ այս հարցում բևեռացված տարբերություններ կային ավետարանական հովիվների միջև: Նրանցից երկուսը բավականին ազատական էին տրամադրված այդ երևույթի ու դրա մեկնաբանության նկատմամբ, մինչդեռ մյուսները դրա տակ տեսնում էին ազգայինի ու ընտանեականի նկատմամբ մեծ վտանգ ու «արևմուտքի» կողմից ընտանեական արժեքների ոչնչացման փորձ:

Հոգեբանները «զենդերը» սահմանում են, որպես անձի անհատական սեռական ինքության գիտակցություն, որը կարող է տարբեր լինել նրա բիոլոգիական սեռային խմբից՝ պայմանավորված լինելով անհատական փորձառությունից և շրջապատող մշակույթից, որը թելադրում է վարքագծային, հոգեբանական և ֆիզիկական հատկությունները: Հովիվներից մեկի կարծիքով «զենդեր» բառի ներմուծումը փորձ է բոլոր ինդիվիդուալներին սոցիալական հավասարություն և ընդունելություն բերելու համար: Ըստ նրա, առողջ հասարակությունը պետք է մի կողմից նպաստի անհատի բիոլոգիական սեռական ինքնության համապատասխանելիությանը իր զենդերին, իսկ մյուս կողմից դրա անհնարիության դեպքում ապահովի բոլոր զենդերների համարժեքությունը հասարակության մեջ: Այս կարծիքին ի հակառակ մեկ այլ հովիվ նշում է հետևյալը. «Մենք քրիստոնեական արժեհամակարգի ջատագովներ ենք, ուստի ընտանիքի ինստիտուտի քայքայմանը ուղղորդված յուրաքանչյուր քայլ սրբապղծություն ենք համարում»: Այլ կերպ ասած, ավետարանական համայնքի շատ անդամներ չեն տարբերվում մեծամասնության ներկայացուցիչներից ու գտնվում են ընդհանուր կեղծ-ազգայնական քարոզչության ազդեցության տակ՝ առանց խորանալու երևույթների էության ու դրանց խորքային մեկնաբանության մեջ:

Ոչ-ավանդական կրոնական համայնքներից շատերում կանանց վերապահված է ոչ թե երկրորդային, այլ երրորդային դերակատարում: Եկեղեցու ներսում կանանց առավել ակտիվ ու գործուն մասնակցությունը արական սեռի ներկայացուցիչների կողմից մերժվում է երկու տարբերակով՝ կանանց մարզինալիզացիա և իդեալիզացիա: Տարբեր երկրներում քրիստոնեական ֆեմինիստական խմբերը կանանց մարզինալացումը եկեղեցու ներքին կյանքից համարում են քրիստոնեական աստվածաբանության սխալ մեկնաբանություն ու արատավորում տղամարդկանց պատրիարքական ավանդական համակարգի կողմից:

Հայաստանում գործող ոչ-ավանդական կրոնական կազմակերպություններից շատերում կանանց հիմնական խնդիրներից մեկը եղել և մնում է կանանց կրթության իրավունքի իրացման խնդիրը: Շատ դեպքերում կանայք ամուսնանում են բավականին վաղ հասակում, ունենում բազմաթիվ երեխաներ ու նրանց կյանքի հիմնական գործառույթը կայանում է այդ երեխաներին կերակրելու ու մեծացնելու մեջ: Սակայն այդ մայրերից շատերը չեն կարողանում կազմակերպել իրենց երեխաների ճիշտ դաստիարակությունն ու կրթությունը, քանի որ իրենք ևս չեն ունեցել դրա հնարավորությունը: Միննույն ժամանակ պետք է նշել, որ առավել պահպանողական կրոնական համայնքներում գործում է խիստ կրոնական արգելք արքրտի նկատմամբ, ինչի արդյունքում էլ այս համայնքներում հաճախ ընտանիքները բազմազավակ են, ինչը էլ ավելի է շատացնում կանանց հոգսերը: Այս երևույթը առավել ցայտուն է երևում գյուղական համայնքներում, որտեղ կանանց վրա է կենտրոնանում ողջ կենցաղային բեռը, քանի որ տղամարդկանցից շատերը մեկնում են արտագնա աշխատանքի ընտանիքի հոգսերը հոգալու նպատակով: Այս պայմաններում, երբ կինը ստիպված է հոգալ և կենցաղային հոգսերը և ապահովել երեխաների խնամքը, համարյա անհնար է դառնում նրանց կրթության ապահովման գործը: Այս երևույթը շատ դեպքերում բնորոշ է ողջ հայ ազգաբնակչությանը:

Ոչ-ավանդական կրոնական ուղղությունների ներկայացուցիչներից շատերը (հատկապես պահպանողական թևը) նշում են, որ իրենց մոտ քիչ են նաև ամուսնալուծությունների քանակը, ինչը նրանք պայմանավորում են աստվածային միության մի բարձր գիտակացականությամբ կատարված ամուսնություններով: Կրոնական առավել ակտիվ պրակտիկան կամ այլ կերպ ասած «հավատացյալ» լինելը օգնում է պահպանել ընտանիքի ամրությունն ու ներողամտություն ցուցաբերել դիմացինի նկատմամբ: Այս հարցում չկան քանակական տվյալներ դա ստուգելու համար, որի պատճառով այս տեղեկությանը վերաբերել ենք որոշակի վերապահումով: Չնայած դրան, այլ երկրների փորձը ցույց է տալիս, որ նմանատիպ պնդումները տեղին են ու ապացուցված: Մասնավորապես ԱՄՆ-ի սև բողոքական եկեղեցու և սպիտակ կաթոլիկների շրջանում անցկացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաճախակի եկեղեցի այցելող այդ անձանց մոտ ամուսնալուծությունների բավականին ցածր տոկոս են կազմում: Եվ եթե ամուսնալուծության առջև կանգնած զույգը ակտիվ

այցելում են միննույն եկեղեցին, ապա մեծ տոկոս է կազմում հաշտեցման երևույթը երկուսի միջև: (Wesley Shrum, "religion and Marital Instability: Change in the 1970s?" Review of Religious Research, Vol. 21 (1980), pp. 135-147):

Վերը նշվածը հաշվի առնելով կարող ենք ենթադրել, որ կրոնական ինքնությունը ոչ ավանդական կրոնական ուղղության ներկայացուցիչներից շատերի մոտ ստորադասվում է ազգային-էթնիկական ինքնությանը, ինչը դրսևորվում է ամենօրյա կյանքում (թերևս որոշակի բացառություններ կան միայն Եհովայի վկաների մոտ): Այդուհանդերձ կրոնական ինքնության անբակտելի տարրերը ժամանակի ընթացքում ներթափանցում են մարդկանց կենցաղ ու երբեմն դուրս մղում էթնիկ ինքնության տարրերին: Այդուհանդերձ պետք է նշել, որ Հայաստանում թե ավանդական (տվյալ դեպքում Հայ առաքելական եկեղեցու) և թե ոչ ավանդական (հիմնականում հիսունական հարանվանություններ) կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում հասարակության մեջ, ընտանիքում կամ այլ սոցիալական իրադրությունների մեջ կնոջ տեղի ու դերի մասին պատկերացումները առավելապես հենվում են «հայկականության», այն է՝ ավանդական մոտեցումների վրա, իսկ կրոնական մոտեցումները հաճախ իրենց խորքում ունեն հենց այդ ավանդականը և յուրահատուկ կերպով ադապտացրել են այն իրենց համակարգում:

Առաջարկություններ

Կրոնական կազմակերպություններին

1. Հայ առաքելական եկեղեցին պետք է առավել արդյունավետ օգտագործի կանանց ներուժը եկեղեցու ներսում՝ հաշվի առնելով քահանաների պակասը և Հռոմի կաթոլիկ եկեղեցու փորձառությունը այս հարցում (Wallace, Ruth A. 1992. *They Call Her Pastor: A New Role for Catholic Women*. Albany, New York: State University of New York Press.):
2. Զարգացնել կանանց աշխարհիկ ծառայության ինստիտուտը, որը չի ենթադրում օծում կամ քահանայություն, սակայն կանայք ներգրավված են լինում եկեղեցու կյանքի տարբեր ոլորտներում:
3. Հայ առաքելական եկեղեցու տարբեր օղակներում նախաձեռնել ու սկզբնավորել դիսկուրս եկեղեցու ներսում կանանց տեղ ու դերի վերաբերյալ, ինչն այսօր էական բացթողումների շարքին կարելի է դասել:
4. Կազմակերպել կանանց իրավունքների ու պատասխանատվությունների վերաբերյալ սեմինարներ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների և հատկապես քահանաների ու հովիվների համար:
5. Ստեղծել արդյունավետ համագործակցության մեխանիզմներ կանանց շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների ու կրոնական կազմակերպությունների միջև, երբ փորձի ու գիտելիքների փոխանակումը հնարավորություն կստեղծի հաղթահարել գոյություն ունեցող խնդիրներից շատերը:
6. Ներառել կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներին կանանց շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումների մեջ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում՝ գոյություն ունեցող կարծրատիպերը հաղթահարելու ու մարտահրավերներին պատասխանելու նպատակով:
7. Խրախուսել կրոնական կազմակերպությունների ղեկավարներին իրենց համայնքների ներսում հաճախակի խոսել կանանց դերի բարձրացման խնդիրների մասին ու հրապարակայնացնել կանանց իրավունքի խախտման դեպքերը իրենց համայնքներում՝ քարոզչության ժամանակ կամ այլ միջոցներով:

ՀՀ Կրթության ու գիտության նախարարությանը

8. Առաջարկել «Հասարակագիտություն» առարկայի շրջանակներում առվել մեծ ուշադրություն դարձնել ավանդական ու ոչ ավանդական կրոնական կազմակերպություններում կանանց իրավունքների ու

պատասխանատվությունների վերաբերյալ հարցերի քննարկումներին: Նմանատիպ քննարկումներ կարելի է կատարել նաև Հայոց եկեղեցու պատմության առարկայի շրջանակներում՝ խոսելով Հայ եկեղեցու վերաբերմունքից կնոջ իրավունքների, դերի ու պատասխանատվության, կնոջ՝ քահանայության արգելքի և այլ հարցերի վերաբերյալ:

ՀՀ Կառավարության ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերի բաժնին

9. Կատարել հետազոտություններ ավանդական ու ոչ ավանդական կրոնական ուղղություններում կանանց դերի, տեղի, իրավունքների ու պատասխանատվությունների վերաբերյալ և դրանց համաձայն մշակել մեխանիզմներ դրանց բարելավման ուղղությամբ:
10. Խրախուսել կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներին առավել բաց ու հաճախակի խոսել համայնքների ներսում առկա խնդիրների վերաբերյալ, որոնք վերաբերում են կանանց իրավունքներին, կնոջ ու տղամարդու հարաբերություններին, միջազգային կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունների կատարմանը:
11. Կազմակերպել քննարկումներ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների ու կանանց իրավունքների խնդիրներով զբաղվող ակտիվ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, որոնց արդյունքում մշակել ծրագրեր ու հայեցակարգեր առկա մարտահրավերներին պատասխանելու ու խնդիրները լուծելու նպատակով:

Միջազգային ու հասարակական, ինչպես նաև դոնոր կազմակերպություններին

12. Առավել մեծ ուշադրություն դարձնել կրոնական կազմակերպություններում կանանց տեղի ու դերի վերաբերյալ հարցերին, կազմակերպել տարատեսակ քննարկումներ այս հարցերով, առավել մեծ ուշադրություն դարձնել կրոնական կազմակերպությունների ակտիվ անդամ կանանց դերակատարմանը ընտանիքում, խմբում, հասարակության մեջ :
13. Իրականացնել առավել համապարփակ որակական հետազոտություններ Հայաստանի տարբեր շրջաններում կրոնական կազմակերպությունների ու կանանց իրավունքների փոխներգործության հարցերի վերաբերյալ:
14. Նպաստել ավանդական ու ոչ-ավանդական եկեղեցիների ներսում կանանց դերի բարձրացմանը, ինչպես նաև խրախուսել ու խթանել այդ համայնքներում կանանց՝ կրթություն ստանալու իրավունքի իրագործմանը: